ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 փետրվարի 2017 թվականի N 17-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՀՐԱԶԴԱՆԻ Վ. ՍԱՐՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 11 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 59-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 333-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել աուդիտորական առաջադրանքի աշխատանքային խումբ հետևյալ կազմով և գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան N 11 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ կազմակերպություն)՝ 2017 թվականի փետրվարի 06-ից մինչև փետրվարի 10-ը ներառյալ կազմակերպությունում ֆինանսական աուդիտ իրականացնելու նպատակով՝

1) ***Կոմիտաս Հունանյան*** - խմբի ղեկավար, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ,

2) ***Անահիտ Սրբեփանյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ,

3) ***Արամ Գրիգորյան*** - անդամ, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ:

2. Աուդիտորական խմբին՝ աուդիտորական առաջադրանքը իրականացնել 2014-2016 թվականների համար ներկայացված ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության և դրանց կիրառելի հիմունքներին համապատասխանության, կատարված փաստացի և դրամարկղային ծախսերի հիմնավորվածության, միավորի հաշվեկշռում գտնվող գույքի /տարածքի/ վարձակալությամբ տրամադրման, վարձավճարների հաշվարկման և գանձման գործընթացների, կազմակերպության կողմից լիազոր մարմնին ներկայացված կոմպլեկտավորման վերաբերյալ տվյալների հավաստիության, կազմակերպության ակտիվների

և պարտավորությունների ամենամյա գույքագրման գործընթացի, գնման ընթացակարգերի արձանագրություններում տեղ գտած տեղեկությունների, պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների պայմանագրին համապատասխանության, աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների հաշվարկման և վճարման գործընթացի գնահատման նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի փետրվարի 03
ք. Հրազդան